ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՎԵՐՋԱԾԱՆՑՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Բ. ՋԱՀՈՒԿՅԱՆ

Հայերենի ածանցների ծագմանը վերաբերող հարցերը հետաքրքրել են հայ և օտարազգի շատ հայագետների։ Այդ հարցերն արծարծվել են ինչպես ընդհանուր, այնպես էլ մասնավոր բնույթի հոդվածներում և մենագրություններում։ Համեմատական լեզվաբանության մեջ վերջածանցները սովորաբար քննվել են հիմքակազմությանը նվիրված հատվածներում, իսկ հայոց լեզվի պատմությանը և նրա առանձին փուլերին նվիրված աշխատություններում՝ բառակազմությանը նվիրված բաժիններում։ Առանձնահատուկ ուշադրության առարկա են եղել հայերենի հնդեվրոպական և իրանական ծագման վերջածանցները։ Նախածանցների ծագման հարցին հայագետներն անդրադարձել են հատկապես հոմնաբան դպրոցի հետ կապված։

Հին հայերենի ածանցների ծագմանն առնչվող հարցերը քննարկման առարկա են եղել մասնավորապես Ա. Մեյեի, Հ. Աճառյանի, Ջ. Գրեպինի, նոր գրական հայերենի ածանցների ծագման հարցը՝ Մ. Աբեղյանի, Գ. Սեվակի, Ա. Մուրվալյանի, Ս. Էլոյանի աշխատություններում։ Յուրատեսակ ամփոփիչ բնույթ ունեն գրաբարի համար Ջ. Գրեպինի և աշխարհաբարի համար՝ Ս. Էլոյանի աշխատությունները։ Յավոք սրտի, Ջ. Գրեպինի ամփոփիչ աշխատության մեջ թույլ են տրվում ածանցների առանձնացման և մեկնաբանության մեծ թվով վրիպումներ, Ս. Էլոյանի աշխատությունների մեջ, բնականաբար, ընդգրկվում են գրաբարի ոչ բոլոր ածանցները, որոշ ածանցների քննությունն էլ կրում է ժամանակի լեզվաբանական պատկերացումների և հնարավորությունների կնիքը։ Լ. Հովսեփյանի «Գրաբարի բառակազմությունը» մենագրության մեջ ածանցների ծագման հարցը հատուկ քննության առարկա չի եղել։

Հայերենի ածանցների ծագման հարցերին մենք անդրադարձել ենք «Հայոց լեզվի համեմատական քերականություն», «Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան», «Հայերենի իրանական ծագման վերջածանցները» աշխատություններում։ Ներկա հոդվածում փորձ է արվում ամփոփելու եղած ուսումնասիրությունների արդյունքները և ժամանակակից գիտության նվաճումների ու մեր դիտարկումների հիման վրա ամբողջական գաղափար տալու հայերենի, մասնավորապես հին հայերենի (նրա գրավոր դրսևորման՝ գրաբարի), վերջածանցների ծագման մասին։ Նախածանցների և բայական վերջածանցների ծագման հետ կապված հարցերը հանգամանորեն քննարկված են մեր վերևում հիշված առաջին երկու աշխատություններում։ Հոմնաբան դպրոցի բառակազմական գործունեության մասին խոսվել է մեր «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V—XV դդ.)» և Ա. Մուրադյանի «Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում» մենագրություններում։

Նախ այբբենական կարգով բերենք գրաբարի, մասնավորապես նրա V դարի վիճակի մեջ արձանագրված անվանական և մակբայական բուն վերջածանցները՝ ծագման վերաբերյալ տեղեկություններով հանդերձ, ապա ընդհանուր եզրակացություններ անենք սրանց ծագումնային շերտերի և կազմավորման առանձնահատկությունների մասին.

-աբար՝ ազատաբար, ընկերաբար, թնամաբար, լրբաբար, մեծաբար, որդեբար. կազմված է -ա- հոդակապից և բուն -բար բաղադրիչից, որ բար-ք բառի արմատն է. վերջինս դերանվանական հիմքերին միանալով կազմում է, այսպես կոչված, կցական բարդություններ՝ այսբար, նիբար, որբար (հմմտ. այսպէս, որպէս).

-ագար՝ աչագար, գլխագար, լեզուագար, խելագար. կազմված է -ա- հոդակապից և բուն -գար բաղադրիչից՝ բարդություն երկրորդ բաղադրիչ→ածանցակերպ→ածանց անցմամբ. գար «ցավ, հիվանդություն» արմատը (հմմտ. գարիլ «ցավել», գարաղութիւն «աղիքի հիվանդություն, փորհարինք») իրանական ծագում ունի. հմմտ. ավեստ. gaoa- «փչացում, կործանում, աղետ», հ. հնդկ. gada- «հիվանդություն» (Ջահուկյան, 1987).

-(ա)գին՝ գորովագին, դիւրագին, նիւանդագին, մոլեգին, կարոգին, ուժգին. այս ածանցը հանդես է գալիս ինչպես միայնակ, այնպես էլ -ա- հոդակապով և -ո- հիմքային տարրով. իրանական ծագում ունի (-gen. թերևս նաև -gīn) և հայերենում տարածվել է իրանական փոխառությունների միջոցով (հմմտ. ուժգին).

-ագոյն՝ դառնագոյն, լրբագոյն, մեծագոյն, սրբագոյն. կազմված է -ա- հոդակապից և բուն գոյն բաղադրիչից, որ գոյն բառն է. վերջինս իրանական ծագում ունի. հմմտ. ավեստ. gaona- «կերպ, եղանակ, գույն», մ. պրսկ. gon «գույն». դերանվանական հիմքերի հետ կազմում է, այսպես կոչված, կցական բարդություններ՝ այնգոյն, այսգոյն (հմմտ. այնպէս, այսպէս, այսբար, այսգունակ).

-ազան՝ աստուածազան, զարմանազան, սրբազան. կազմված է -ա- հոդակապից և բուն -զան բաղադրիչից, որ իրանական ծագում ունի (zan «տեսակ»), բազմազան, նրաշազան բառերը կամ ամբողջովին իրանական փոխառություններ են, կամ բազում, նրաշ իրանական փոխառություններից -զան-ով հայկական կազմություններ. զան-ը դերանվանական հիմքերի հետ կազմում է, այսպես կոչված, կցական բարդություններ (նիզան, որզան), այլև հանդես է գալիս կրկնությամբ՝ զանազան.

-աժէտ (աժետ, ուշ՝ -աժոտ, -աժատ)՝ լուսնաժէտ, որկորաժէտ, որովայնաժէտ. կազմված է -ա- հոդակապից (հին հիմքային տարրից) և բուն -ժէտ բաղադրիչից, որ ծագում է իրան. zaťan (zaťan) «խփել» բայի հիմքից՝ «-հար» նշանակությամբ. հանդիպում է իրանական փոխառություններում ախտաժէտ (ախտաժետ. հմմտ. ախտ), դիւաժետ (դիւաժատ. հմմտ. դեւ).

-ալ, -ել, -իլ, -(ո)լ, -ուլ՝ մնալ, ուտել, ունիլ (-ել), գոլ, նեղուլ. բայի անորոշ ձևը կազմող այս ածանցը կազմված է -ա-, -ե-, -ի-, -ո-, -ու-, հիմքային ձայնավորներից և -լ- տարրից, որ ծագում է հ.-ե. *-lo- ածանցից (հմմտ. սեռ. -լոյ՝ *-loslo-ից)։

-ալի, -ելի, -լի՝ զարմանալի, իմանալի, ուտելի, ընդունելի, նեղլի. դերբայական այս ածանցը կազմված է հիմքային ձայնավորներից (ընդ որում -ի-ն փոխարինվում է -ե-ով, իսկ -ու-ն սղվում է) և -լի տարրից, որ հավանաբար գալիս է հ.-ե. *-lilo- (*-i(o)- *-ilo-) բաղադրյալ ածանցից. հմմտ. թոխ. -lye, -(l)le (գերունդիումի կազմիչ՝ պարտավորվածության իմաստով, Тохарские языки, 1959, 97). Թոխարական զուգահեռը ցույց է տալիս, որ -լի, սեռ. -լիոյ ածանցը, գալիս է հնդեվրոպական շրջանից և ոչ թե հայկական նորագոյացում է՝ կազմված անորոշի -(ա, ե) լ-ով և -ի ածանցով. -(ա), ե) լի-ն Ջուլտան համեմատում է լատ. -ilis ածանցի հետ (agilis, docilis և այլն) (Solta, 1974, 64), բայց այս դեպքում չի բացատրվում -լի-ին նախորդող ձայնավորների բնույթը. -(ա, ե) լի ածանցը հանդես է գալիս նաև հոգնակերտ -f-ի հետ միասին՝ արբելիf, լսելիf, բառնալիf, զարմանալիf, զենլիf.

-ած՝ գթած, երկիւղած, ողորմած. կատաղած, յօգնած, ուսած (սրանք հետագայում դերբայացել են). ասած, գործած, կազմած, կոտորած, ձուլած. ծագում է ած-ել բայի արմատից (հմմտ. գթած «գութ ածող»). հնարավոր է համարվում նաև գոյականակազմ -ած-ի հնդեվրոպական ծագումը՝ հ.-ե. ǵ'>հայ. ծ անցմամբ. հմմտ. հուն. ἅρπαξ, -αγος «թալանչի, ավարառու. թալան, ավար» (Greppin, 1975, 22).

-ածոյ՝ խարտածոյ, ծալածոյ, կոփածոյ, կռածոյ, մթերածոյ, քերածոյ. կազմված է -ած և -ոյ վերջածանցներից. հակառակ Գրեպինի կարծիքի (Greppin, 1975, 23)՝ հանդես է գալիս որպես միասնական վերջածանց, այսինքն՝ սրանով կազմված բառերը -ած-ով բառերի երկրորդային ածանցումները չեն. նրանք հաճախ -ած-ով զուգահեռներ չունեն.

-ակ[1] (տե՛ս նաև -եակ, -իկ, -ոյկ, -ուկ)՝ աղիւսակ, անտառակ, գաւառակ, գետակ, լճակ, տնակ. հավանաբար ծագում է իրան. -ak ածանցից, որ որոշ տարածքներում թերևս ունեցել է փոքրացուցիչ արժեք (հմմտ. գնդակ—գունդ, նկանակ—նկան, սրահակ—սրահ իրանական փոխառությունները). հնարավոր է ենթադրել -ակ-ով կազմությունների բաղարկում հ.-ե. *-kon->հայ. -կ(ն) ածանցով բնիկ հնդեվրոպական բառերի հետ, ինչպես -իկ և -ուկ ածանցների դեպքում.

-ակ[2]՝ բոլորակ, գիտակ, երգակ, էակ, հասակ, տեսակ, քանակ. ծագում է իրան. -ak ածանցից, որ առկա է իրանական փոխառություններում՝ հաճախ առանց -ակ-ով ձևերի առկայության՝ ախորժակ, բուժակ, դիմակ, կամակ, նուիրակ, վրիպակ, քանդակ.

-(ա)կան՝ բծկան, մոռացկան. առնական, խաստեղական, գոյական, (ե)աեղական, իւրական, ճանաչական. ծագում է իրան. -(a)kan ածանցից, հաճախադեպ է իրանական փոխառություններում՝ ասպնջական, գրաւական, վաճառական, տոհմական. վարձկան.

-(ա)կար (-(ա)կեր, -(ա)կեար)՝ աղաւթկար. -կեր և -կեար տարբերակներով հանդերձ ավելի հաճախադեպ է իրանական փոխառություններում՝ կամակար, կաւշկակար, վնասակար. խոհակեր «խոհարար», համոզակեր. -կար-ը ծագում է մ. իրան. -kār ածանցակերպից (kara- «անել» բայահիմքից), իսկ -ա-ն կա՛մ գալիս է իրան. հիմքային ձևից, կա՛մ հայերենի հոդակապն է.

-ակի՝ եւթնակի, երկակի, հնգակի, յոգնակի, յոլովակի, քառակի. արշաւակի, երեւակի, թեթեւակի, կողմնակի, ուղղակի. հավանաբար ծագում է -ակ ածանցի սեռական-տրական հոլովաձևից, որ հետո որպես ինքնուրույն ածանց տարածվել է առանց -ակ-ի ձևերի վրա. հմմտ. առանձնակ—առանձնակի, ընդելակ—ընդելակի. այս մեկնության դեպքում պատահական պետք է համարել նմանությունը հուն. -αχις (πεντάχις) «հնգիցս, հինգ անգամ» և խեթ. -anki (2-anki «երկիցս, երկու անգամ») ածանցների հետ (Greppin, 1975, 34). այն ծագումնաբանորեն դժվար բացատրելի է՝ հնչյունապես խոցելի (եթե չենթադրենք բաղարկություն).

-ակն (հմմտ. -ակ)՝ դիտակն, այլև, թերևս, արեգակն, կայծակն, փայլակն (եթե վերջիններիս ակն-ը նույնը չէ ակն «աչք» բառի հետ). ծագում է հ.-ե. *-kon- ածանցից՝ նախորդող ա-ով. կ-ի անշնչեղությունը բացատրվում է նրա դիրքով ն-ից առաջ.

-աղ՝ թակաղ, կենցաղ, այլև խանդաղ(-ատ), կախաղ(-ան) և յաչաղ(-ել), յ-ապաղ(-ել). հավանաբար ծագում է հ.-ե. *-lo- ածանցից՝ նախորդող -ա- ձայնավորով. -ա-ի համար հմմտ. թակ, -աց, աչ, -աց, ապա.

-ամն՝ այծեամն (կազմված է այծի հիմքից, և պետք է առանձնացնել ոչ թե -եամն, այլ -ամն ածանց). ծագումը պարզ չէ. կարելի է ենթադրել ինչ-որ հին գոյականական կամ, ավելի քիչ հավանականությամբ, ածականական բաղադրիչ.

–այ՝ ակամայ, կամայ. *ծագում է միջ. իրան.* -āy (-avya-) *ածանցից (հմմտ. պարթ.* agamāy *«ակամա»՝* kām *«կամք, ցանկություն» բառից). տե՛ս նաև* –եայ.

–ային՝ ամառնային, ամսային, գարնանային, երկնային, մարդկային, իրային, ձերային, մերային, նոցային. *ամենայն հավանականությամբ կազմված է* –ա(յ) *տարրից և* –ին *ածանցից. հմմտ. նախ՝* իրային—իրոյին, ձերային—ձերոյին, մերոյին—մերային *տարբերակները՝* իրոյ, ձերոյ, մերոյ *ձևերի կողքին՝* իրոյ—իրոյին—իրային *զարգացմամբ (վերջինս համաբանությամբ). երկրորդ՝* նոցա—նոցային *կազմությունը՝ հիմքային* ա-*ի պահպանմամբ և* –ին *ածանցով. երրորդ՝* ա-*ով հիմք ունեցող բառերի* –ային-*ով կազմությունները՝ հնդեվրոպական* դարին, –ա–ց—դարբնային, երկիր, –ա–ց—երկրային, լեզու, –ա–ց—լեզուային *և այլն (հերթագայական են* ամարային, ձմերային *ձևերը* ամառ, –ռան, ձմեռ, –ռան *ձևերից՝* ամառնային, ձմեռնային *ուշ ձևերի կողքին), ոչ հնդեվրոպական* ագարակ, –ա–ց—ագարակային, աշխարհ, –ա–ց—աշխարհային, խաւար, –ա–ց—խաւարային, հրեշտակ, –ա–ց—հրեշտակային *և այլն. հիմքային* –ա-*ի անկումից հետո ընկալվելով որպես ինքնուրույն ածանց՝* –ային-*ը բառեր է կազմել նաև ոչ* –ա-*ով հիմքերից՝* աշուն, –նան—աշնանային, երկին, –ի–ց—երկնային, հող, –ոյ—հողային, ջերմ, –ոյ—ջերմային *և այլն. անհավանական պետք է համարել իրանական ծագման վարկածը՝* -aina- *(ավեստ.* -aēna-, *հ. պրսկ.* -aina-) *ածանցից, որ նյութական ածականներ է կազմել՝ ավեստ.* zaranaēna *«ոսկյա», հ. պրսկ.* aδanaina *«քարե» և այլն. իրանական ածանցը գործածությամբ շատ ավելի նեղ է եղել և միջին շրջանում ունեցել է* -ēn *տեսքը. կարելի էր կարծել, որ իրանական ածանցը նպաստել է հայերեն ածանցի բաղադրիչների միասնացմանը և տարածմանը, եթե ունենայինք նյութ նշանակող իրանական ծագման հիմքերից* –ային-*ով կազմություններ, բայց այդպիսիք չկան. ուրարտական* aini-*ով հատուկ անունները պետք է կամ հայկական և իրանական կազմություններ լինեն, կամ կազմված լինեն ուրարտական* -ni-*ով՝* -ia-*ով հիմքերից.*

–այն՝ ամենայն, երկայն *(հմմտ.* երկար), միայն, որովայն, ոսկայն, ունայն. *ամենայն հավանականությամբ ծագում է* *-ā/ə-*ով *վերջացող բառերի վրա* *-ino- *ածանցի հավելմամբ.* *-ā/ə-*ից *ծագող* ա-*ն հետագայում գիտակցվել է որպես ածանցի տարր, իսկ* i-*ն ձայնավորից հետո վերածվել է* յ-*ի. հմմտ.* *dua-ino-> երկայն *և* *dua-ro >երկար *(=հուն.* δήρον). -ino-*ի համար հմմտ. հուն.* ἀνθινος *«ծաղկային»* (ἄνθος *«ծաղիկ»), լատ.* fūnginus *«սնկային»* (fungus *«սունկ»), հ. սլավ.* зимьнъ *«ձմեռային»* (зима *«ձմեռ»).* լռելեայն *(լռելի-ից),* գիշերայն, միայն *ձևերի համար թերևս հնարավոր կլիներ ենթադրել հին մակբայական* –այ *վերջավորության վրա* ն *հոդի հավելում (հմմտ.* գիշերայն-*ի կողքին* գիշերոյն). *հարկավոր է նկատի առնել, որ հին* -a-*ով հիմքերի սեռական-տրականի* ա-*ն վաղ է փոխարինվել* ի-*ով.*

–այնի՝ ամարայնի, գարն(ան)այնի, ձմերայնի. *մակբայական այս ածանցը հավանաբար ծագում է* –ային *ածականական ածանցի հին ներգոյականի ձևից՝* ամարային—ամարայնի, գարն(ան)ային—գարնայնի, ձմերային—ձմերայնի. *ավելի քիչ հավանական է ենթադրել* –ային- *և* –ի *ածանցների բաղադրության կամ* –այն *ածանցի սեռական-տրականի ձև (*Greppin, *1975, 105.* *ամարայն, *գարնայն, *ձմերայն *ձևեր չկան).*

–այf. *այս ածանցի մեջ միավորվող ձևերը կազմված են* –այ *տարրից* –f *հոգնակերտով, ընդ որում* –այ-*ը հավանաբար գալիս է տարբեր աղբյուրներից. 1)* եպիկուրայf, պիւթագորայf *ձևերում* –այ-*ը դալիս է* Եպիկուր, Պիւթագոր(աս) *հատուկ անունների սեռական-տրականի ձևից* (Եպիկուր, –այ, –այ-f). *2)* ագոնիստայf, աթղե(ա)տայf, հերեսիո(վ)տայf *ձևերում այն գալիս է հունական* αι-*ով հոգնակի ձևերից՝* ἀγωνισταί *«մարտիկներ»,* ἀθλητάι *«աթլետներ, ըմբիշներ»,* αἱρησιῶται *«հերետիկոսներ». 3) իրանական փո-*

խառյալ հիմքերով աշխարհայf, իշխանայf ձևերում թերևս պահպանվել է հիմքային հին -ա-ով ձևը (հմմտ. աշխարհ-ա-ց, իշխան-ա-ց, այլև գնանապարհայն). 4) Ասորական փոխառյալ հիմքերով խանութայf, հոիտորայf, պրակսաւթայf ձևերում (վերջին երկուսը իրենց հերթին փոխառված են հունարենից) հավանաբար պահպանվել է ասոր. -ā-ն (status emphaticus)՝ հայերենի համար սովորական -յ-ի հավելումով և -այf-ի համաբանական տարածմամբ։ Հնարավոր է, թերևս, մի շարք ձևերի համար ենթադրել կանայf ձևի համաբանական ազդեցությունը։ Նկատի ունենալով հայերենի շեշտի բնույթը՝ շեշտահաջորդ վանկերի անկումով, պատահական պետք է համարել և ծագումնաբանորեն չմեկնել նմանությունը հուն. -α-ով հիմքերի հոդն. ուղղ. (ὑεαί «աստվածուհիներ») ձևի հոգնակիի հետ, որ զուգահեռ ունի լատ. deae ձևի մեջ։ Պատահական պետք է համարել նաև -այ-ի նմանությունը միջ. պրսկ. -ay ածանցի հետ՝ հակառակ Գրեպինի կարծիքի (Greppin, 1975, 66).

-ան[1] արգելան, գլան, գեղձան, կեղդան, փորձան. հավանաբար տարբեր է իրանական ծագում ունեցող -ան (արժ-ան, պատուփրան և այլն) ածանցից, թեև կարող է բաղարկված լինել նրա հետ. կարելի է ենթադրել բնիկ հնդեվրոպական ծագում՝ կամ -no-/-ā- ածանցից՝ *-ā/ə- հիմքակազմ տարրով (*-a-no-/-a-*,-ə-no-/-a-).. կամ այս ածանցի *-əno-/-ā-, *-ьno-/-ā- տիպի մի տարբերակից. այս դեպքում -ան-ն ունի նույն ծագումը, ինչ բերան, -ոյ բառի -ան-ը, այն տարբերությամբ, որ բերան-ը ունի -ո-վ հիմք և չի դիտակցվում որպես բաղադրյալ կազմություն. հմմտ. նաև գերան, -ի, -ag < *u̯er-ьnā. հ.-ե. ածանցը կազմում էր գույների անուններ (հմմտ. դեղձան), այլև ընդհանրապես ածականներ (հմմտ. հ. հնդկ. jānanah «ծնող», vahanah «ճանապարհորդող»), գոյականներ (հմմտ. հ. հնդկ. sthanā- «հանգրստավայր»).

-ան[2]. ակնհայտ իրանական ծագում ունի և գալիս է -an(a)- ածանցից. -ան-ով իրանական փոխառությունները հաճախ ունեն առանց -ան-ի զուգահեռներ, այսինքն՝ առկա է -ան-ով և առանց -ան-ի ձևերի հակադրություն՝ արժան (հմմտ. արժել), բաժան (հմմտ. բաժ, բաժին), դրուժան (հմմտ. դրժել), իշխան (հմմտ. իշխել), պատուփրան (հմմտ. պատուէր). միայն -ան-ով են հանդիպում երասան, նուարան, պատմունան բառերը. հայտնի չէ, ոչ իրանական հիմքերի գոնե մի մասի դեպքում մենք գործ ունենք համաբանությամբ տարածված այս ածանցի՞, թե՞ բուն հնդեվրոպական կազմիչի հետ, և արդյոք տեղի չի՞ ունեցել իրանական ծագման ածանցի և բուն հայկական կազմիչի բաղարկություն.

-ան[3]՝ իշան(f), ձիան(f). հավանաբար ծագում է մ. իրան. -ān հոգնակերտից. սա հանդիպում է պարթևերենում, միջին պարսկերենում, ինչպես նաև նոր պարսկերենում[1].

-անակ՝ այսանակ, անցանակ, ըմպանակ, մրցանակ, յաղթանակ, (յ)եղանակ, ցուցանակ. ծագում է իրան. -ānak(a)- ածանցից և հանդիպում է իրանական փոխառություններում՝ գանձանակ, դահանակ, ժամանակ.

-անաւր՝ անդանաւր, ատանաւր, ուրանաւր. հանդիպում է միայն հնդեվրոպական ծագման հիմքերի հետ, բայց հավաստի հնդեվրոպական ստուգաբանություն չունի. քիչ հավանական է նրա մեջ տեսնել հ.-ե. *an- ցուցականից կամ *ān(ā)-ից («վրա, ուղղությամբ») կազմված որևէ ձև (*anə:ro-).

---

[1] Այս կապակցությամբ սխալվում է Գրեպինը (Greppin, 1975, 38), որ մերժում է -ան հավաքական-հոգնակերտի իրանական ծագումը այն պատճառաբանությամբ, թե ան-ը ուշ զարգացման արդյունք է և հին տեքստերում, ինչպես, օրինակ, աստվածաշնչում, չի հանդիպում։

–(ա)նդակ՝ այլանդակ. *ծագում է իրան.* -(a)ndak *ածանցից և հանդիպում է իրանական փոխառություններում՝* բովանդակ, *այլև, թերևս,* աւժանդակ, դժնդակ, սուրհանդակ.

–անդի *(և* –անդիկ) վտարանդի, *միայն մեկ բառի մեջ պահպանված այս ածանցը, ինչպես նաև* վտարանդիկ *ձևի մեջ պահպանված* –անդիկ–*ը, ակնհայտ իրանական ծագում ունեն.* –նդ–*ի համար հմմտ.* –(ա)նդակ, *որի* –նդ–*ն ծագում է իրան.* *nt-*ից, իսկ* –ի–*ն և* –իկ–*ը, ինչպես* –ակ–*ի դեպքում, ածանցական հավելումներ են.*

–անդ(ի)՝ դրանդ(ի). անդ *«շեմք» բառն է (հ.-ե.* *an(ə)tā), *որ պահպանվել է նաև* անդաստակ *բառի մեջ, սակայն կապը չի դիտակցվում.*

–անդ(ն) *(տե՛ս* –անդ)՝ արգանդ *(հմմտ.* արգ–ա–հատել), եռանդն. *ծագում է հ.-ե.* *ti- *ածանցից նախորդող* *-r- *տարրով և* եռանդն–*ի դեպքում՝ աճած* ն–*ով.*

–անի[1]՝ բոկանի, գեղանի, դողանի, լեզուանի, ճովանի, մաւրանի, պիտանի, *այլև մթագնված կազմությամբ* կենդանի, ճոլանի, ճոմանի. *նկատի ունենալով այս,* –անի–*ով բառերի գերակշիռ մասի բնիկ հնդեվրոպական ծագումը և* տողան—տողանի *տիպի զուգահեռների առկայությունը կարելի է համարել հայկական կազմություն՝* –ան *ածանցով կամ հիմքային տարրով և* –ի *ածանցով, սրանից պետք է տարբերել այն* –անի–*ն, որ իբրև ինքնուրույն ածանց գիտակցվել է բառավերջի* –ն–*ի անկումից հետո և որը կազմված է* –ան *հիմքակազմ տարրից ու* –ի *ածանցից՝* ակն—ական—ականի. անուն—անուան—անուանի *և այլն։*

–անի[2]՝ ազատանի, աւագանի, նամականի, վնասանի. *նկատի ունենալով* –անի–*ով հոգնակերտ-հավաքական բառերի մեծ մասի իրանական ծագումը այն պետք է համարել իրանական* an *հոգնակերտից ծագող* –ան–*ի և* –ի–*ի միացման արդյունք. վերջինիս ծագումը լիովին պարզ չէ.*

–ռանն՝ իւրեանցանն, իմովսանն. *կազմված է* –ան[1] *ածանցից* –ն *հոդով* (Աճառյան, *ՀԱԲ, 2, 242).*

–անոց. *կազմված է* –ան *տարրից և* –ոց *ածանցից, ընդ որում* –ան–*ի ծագումը տարբեր է. այն մասամբ գոյականական հիմքակազմ տարր է՝* ամարանոց *(հմմտ.* ամա.ւն, սեռ.-տր. ամարան), կողմանոց, ձմեռանոց (–անոց–*ի հետագա միասնական ըմբռնմամբ և տարածմամբ՝* եզնանոց, թիկնանոց), *մասամբ, թերևս* –ան *հոգնակերտ-հավաքականիշը՝* աշակերտանոց, աւազականոց, երիտասարդանոց, *մասամբ էլ բայական հիմքակազմ տարր՝* ելանոց (ՆՀԲ–*ում չկա.* Լ. Հովհաննիսյան, *194),* ճեծանոց *(եթե կապված է* ճեծանեմ *բայի հետ. հմմտ. նաև* ճեծան).

–(ան)ուտ՝ կիզանուտ, վիժանուտ. *կազմված է* –ան– *հիմքակազմ տարրից և* –ուտ *ածանցից.* հոսանուտ *(հմմտ.* հոսան–f), ճովանուտ *(հմմտ.* ճովան–ոց), յորձանուտ *(հմմտ.* յորձան–f), շիշանուտ *(հմմտ.* շիշան–իմ) *ձևերում* –ան–*ը պատկանում է հիմքին, և անջատելի է* –ուտ *ածանցը. այդ հման վրա էլ* ախոնդանոտ *բառի մեջ* –անատ *ածանց չի առանձնացվում, որովհետև այս բառը կազմված է ոչ թե բուն* ախոնդ–*ից, այլ* ախոնդան–(f) *հիմքից.* –ան–*ով հիմք* (*կիզանեմ) *պետք է ենթադրել նաև* կիզանուտ *բառի գոյական սկզբնաձևի համար։ Ջ. Գրեպինի այն առարկությունը, թե ածանցելի հիմքերը բնիկ չեն, ուստի և* –անուտ–*ը ենթաշերտային ծագում ունի (*Greppin, *1975, 44), հիմնավոր չէ. Գրեպինը հաշվի չի առել* –ան–*ով հիմքային ձևերի առկայությունը և եղծ ու* յորձ *արմատների հնարավոր հնդեվրոպական ծագումը* *selg'- *և* *ordhl- *հիմքային ձևերից, նշենք, որ նա վրիպում է* –անուտ *ածանց առանձնացնելով* սասանուտ/սասանուտ *ձևերում, որոնք* սասան–(ել) *հիմքից են։*

–անց՝ ածանց. *արհեստականորեն կազմվել է Թրակացու «Քերականական արվեստի» հայ թարգմանչի կողմից* անց(անել) *բայի արմատից* ածանցական *ձևի հետ միասին՝ հուն.* παράγωγον *բառի օրինակով. հմմտ.* ած–

անցուցանել *«ածանցել»*, *որտեղ* անցուցանել*-ը* անցանել *բայի պատճառական է. այժմ կապը* անցանել>անցնել *բայի հետ չի գիտակցվում. Հնում* անց*-ը սակավադեպ է հանդիպում որպես բարդության բաղադրիչ* դիւրանց. *ավելի տարածված է* -զ-անց*-ը՝* երդմնազանց, ուխտազանց *և այլն.*

-անք¹՝ աղաչանք, ամաւթանք, աշխատանք, եպերանք, մաղթանք. *ծագում է* -ան- *բայահիմքային տարրից (կազմիչից)* -ք *հոգնակերտով, որ այս դեպքում ածանցական արժեք է ձեռք բերել. Հմմտ.* աղքատանք—աղքատա-ն-(ալ), գտանք—գտան-(ել), երևութանք—երևութան-(ալ), զառածանք—զառածան-(ել), զարման-ք—զարման-(ալ), յանցան-ք—յանցան-(ել), լուծան-ք—լուծան-(ել) *և այլն. եթե կան բայական զուգահեռ* -ան-*ով և առանց* -ան-*ի ձևեր,* -ան-ք-*ով ձևերը կազմվել են* -ան-*ով ձևերից՝* մարթանք—մարթան-(ալ) *և* մարթ-(ել), լուտան-ք—լուտան-(ալ) *և* լուտ-(ալ). *Հետագայում* -ան-ք-*ը համաբանությամբ անուններ է կազմել նաև* -ան-*ից զուրկ հիմքերից՝* աղաչ-ել—աղաչան-ք, մաղթ-ել—մաղթ-ան-ք, ողորմ-իլ—ողորմ-ան-ք *և այլն.* -ան-ք-*ի կայունացման և տարածման համար քիչ դեր չեն խաղացել իրանական բայահիմքերից ածական անուններ կազմող* -an-*ով, մասամբ, թերևս, նաև ասորական* -ana-*ով հիմքերը (Հմմտ.* փրկան-ք<*ասոր.* purqana). *Ճիշտ չէ Գրեպինը (*Greppin, *1975, 43)՝ նշելով, թե «*-անք *ածանցը երևան է գալիս միայն ենթաշերտային ծագման արմատների հետ (?) և նմանապես ինքն էլ պիտի լինի ենթաշերտային ծագման».*

-անք²՝ Մարեմանք. *հավանաբար ծագում է իրանական հայրանվանական ածանցից* -ք *հոգնակերտով. Հմմտ. մ. պ.* Kavad i Perōzan *«Կավադը Պերոզի տոհմից (=*Պերոզեան*)».*

-աշ՝ աղուաշ *«հիմար, խենթուկ», հետագա* թթուաշ. *ծագումն անհայտ է. Թերևս գալիս է ենթաշերտային ինչ-որ լեզվից (ուրարտերենի՞ց).*

-(ա)պան՝ թարպան. դռնապան, լանջապան. -պան-*ը ծագում է իրան.* -pan *ածանցից (ուշ* -ban*) և հանդիպում է իրանական շատ փոխառություններում. Հմմտ.* բարապան, դաստապան, պաշտպան *և այլն.*

-(ա)պանակ՝ լանջապանակ *(Հմմտ.* լանջապան). *ծագում է իրան.* -panak *ածանցից, որի առանց* -ak-*ի ձևից է* -պան *ածանցը. Հմմտ.* կշտապանակ.

-(ա)պատիկ՝ երեքպատիկ, երկպատիկ, եաւթնապատիկ. ամենապատիկ, հարիւրապատիկ, յուգնապատիկ, յոլովապատիկ. *ծագում է* պատ-ել *բայի արմատից* -իկ *ածանցով.* երկպատական *բառի մեջ* պատիկ-*ի փոխարեն առկա է* պատական *ձևը.*

-ապէս՝ էապէս, իսկապէս, նմանապէս, քաջապէս. -պէս-*ը ծագում է* պէս *բառից, որի աղբյուրն է միջին իրանական* *pes *բառը.*

-առուտ՝ կարճառուտ. *Հմմտ.* համառուտ. *ծագումն անհայտ է. Նկատի ունենալով* կարճ *արմատը և* համ *նախածանցը՝ կարելի է ենթադրել ինչ-որ արմատ՝* առուտ *կամ* ռուտ. *քիչ հավանական է* առուտ-*ի, «*առ- (առնուլ *բայի արմատը)+* -ուտ *ածանց» մեկնությունը.*

-(ա)սուն՝ յիսուն (*յինգսուն), վաթսուն, ութսուն. քառասուն, յոթանասուն./-սուն-*ը ծագում է հ.-ե.* *k'omtə-*ից, որ կազմել է տասնյակ ցույց տվող թվականներ (Հմմտ.* երեսուն—*հուն.* τριάκοντα).

-(ա)ստ *(տե՛ս նաև* -եստ, -իստ, -ուստ)՝ զգաստ, իմաստ, ուրաստ. *Հավանաբար ծագում է հ.-ե.* *-sti- *ածանցից (Հմմտ. խեթ.* -ašti, *հ. սլ.* osti) (Benveniste, *1962, 95)՝ նախորդող* -ա- *ձայնավորով, որ տարբեր բնույթ ունի.*

-(ա)ստան՝ ամարաստան *(Հմմտ.* ամառանոց), այգեստան, անդաստան, հեռաստան, ձիաստան. -ստան-*ը ծագում է իրան.* *stān(a)- *ածանցակերպից (հ.-ե.* *stā- *«կանգնել, դնել» արմատից՝* *-no- *ածանցով). Հաճախակի է իրանական փոխառություններում՝* ասպաստան *«ախոռ, ձիաստան» (Հմմտ.* ասպազէն, ասպետ), դատաստան *(Հմմտ.* դատ), շահ(ս)-ստան *«մայրաքաղաք» (Հմմտ. մ. պրսկ.* šahrstān), սակստան *«շնանոց».*

-ատ(ի)՝ հաւատ(ի). *հավանաբար ծագում է հ.-ե.* *-ag′-to- (-ag′-ti′o-) *դերբայական ձևից* (ag′- *«քշել, տանել, վարել, առաջնորդել», որտեղից* ածել)՝ *g′>ծ>ս *փոփոխությամբ* *t-ի *մոտ, ընդ որում* ի-ն *հետագա հավելում է. բառացի նշանակել է «ածեալ՝ ուղարկված, հղված, ծառա», ինչպես հուն.* ἄκτος *լատ.* actus: *Հայտնի չէ, կապ ունի՞ արդյոք* հաւատի-*ի* աստի-*ի հետ.*

-աստուն՝ ամարաստուն. -(ա)ստան *ածանցի տարբերակն է (համմտ.* ամարաստան)՝ *վերջին մասով բաղարկված* տուն *բառի հետ.*

-ատ¹՝ արմատ, հաստատ, *այլև, թերևս,* աղքատ, անքատ, փինատ, *որոնց ածանցելի հիմքերը անկախաբար չեն պահպանվել. հավանաբար հնդեվրոպական ծագում ունի և համեմատելի է հ. հնդկ.* -ad-, *ավ.* -ǝδ-, *հուն.* -αδ- *ածանցների հետ. համմտ. հ. հնդկ.* dṛsad- *«ժայռ, քար», հուն.* δειράς, -άδος *«լեռնաշղթա», այլև հ. հնդկ.* śarad- *«աշուն» (ավ.* sarǝd-), *հուն.* φυγάς, -άδος *«վազող, փախչող, փախստական»* (Greppin, *1975, 36).*

-ատ²՝ ականատ, խրամատ, միշատ, ունչատ, պնչատ, փայտատ, *ծագում է* հատ-անել *բայի արմատից՝* ն-*ի անկումով (համմտ.* քնահատ—*քրքր.* քնատ). *վերջինիս աղբյուրն էլ ամենայն հավանականությամբ խեթ.* ḫattai- *«հատել, կտրել, ծակել, պատռել» բայի արմատն է.*

-(ա)տակ՝ փլատակ. -տակ-*ը ծագում է իրան.* -tak(a)- *ածանցից* (*-ta-ka-) *և հանդիպում է մի շարք իրանական փոխառություններում՝* -տակ *և* -ատակ *տարբերակներով՝* ամբարտակ, գումարտակ, հրեշտակ *և* յիշատակ *(համմտ.* յիշել), պարսատակ.

-ար¹ *(համմտ.* -իր, -որ, -ուր)՝ մեծար, մթար, մոլար *(համմտ.* մոլ-ի, մոլոր), *այլև գրաբարում այլևս անվերլուծելի* արդար, գալար, դալար, երկար *(համմտ.* երկայն). *ծագում է հ.-ե.* *-(e)ro- *ածանցից.* *-ro-*ի դեպքում նախորդ ձայնավորով՝* երկար <*duaro- *(համմտ. հոմ.* δήρ *«երկար ժամանակ»),* մեծար <*meg′ǝro- *(համմտ. հուն.* *μέγαρος, *որտեղից* μεγαίρω մեծարել), արդար <ardhǝro- *(համմտ. ավ.* arǝdhra- *«հավատարիմ»),* դալար *(համմտ. հուն.* θυγερος *«մատաղ»). թերևս մասամբ խառնվել է* առնել *բայի* ար- *հիմքից ծագող ձևերի հետ.*

-ար²՝ կտցար, փողար. *ծագում է* հառնել *բայի արմատից՝* ն-*ի անկմամբ ինչպես* -ատ<-հատ, -ոտ<հոտ, *թերևս նաև* -եղ<-հեղ.

-արան՝ անցարան, աւթարան *(համմտ.* աւթանոց), գործարան, երգարան, լոգարան. *ծագում է իրան.* -a-δan(a)- *ածանցակերպից* (-a- *հիմքակազմ տարր*+dana- *«տեղ») հաճախ գիտակցվում է և իրանական փոխառություններում՝* բաստարան, գանձարան, զոհարան.

-արէն, -երէն՝ փոխարէն, պրենսերէն, հեթանոսերէն, ողբերէն, ստամբակերէն, քրիստոսերէն. հրէարէն (հրեայերէն), հռովմէարէն (հռոմարէն, հռովմերէն), պարթեւարէն, քաղդէարէն. ասորերէն, հայերէն, յունէրէն. *առկա է երկու վարկած. ըստ մի շարք հայագետ-իրանագետների (Հյուբշման, Նիբերգ, Լերուա և ուրիշներ)՝ ծագում է* արէն-*ի համար հիմք ծառայած* aβoēn *«կերպ, եղանակ» բառի* aδen *տարբերակից. այս ենթադրությունն ունի երկու թույլ կողմ, առաջին՝ եթե* արէն-*ը անկախ գործածվում է հայերենում, ապա* արէն *անկախ տարբերակ չկա. երկրորդ՝ համոզիչ կերպով չի լուծվում* -արէն-*ի* -երէն *տարբերակի հարցը. վերջինիս համար ենթադրվում է* -ե-*ով կամ* -ի-*ով հիմք, բայց* -երէն-*ով բառերի մեջ այդպիսի նախնական հիմքային ձև չի հայտնաբերվում (ինչո՞ւ, օրինակ,* ողբ, -ոյ *բառից պետք է կազմվեր* ողբերէն *ձևը). գոյություն ունեցող* հեթանոսարէն—հեթանոսերէն *զուգահեռ ձևերից երկրորդն ունի* -երէն *տարբերակը և ոչ* -արէն-*ը. հավանական չէ նաև այն վարկածը, ըստ որի* -ա-րէն/երէն-*ը կազմված է* -ար/եար *և* -էն *տարրերից.*

-արիմ/-երիմ՝ հաւատարիմ, մտերիմ, ոխերիմ (ոխորիմ). *ծագումն անհայտ է, և հիմքերի բնույթը բանալի չի տալիս հարցի լուծման համար. երեք հիմքերից մեկը հնդեվրոպական է* (**մտերիմ**), *բայց* **երիմ**-*ի բնույթը հնդեվրոպական հողի վրա՝ անբացատրելի, երկրորդի* (**հաւատ-արիմ**) *հնդեվրոպական բնույթը՝ կասկածելի, երրորդի* (**ոխերիմ/ոխորիմ**) *ծագումը պարզ չէ.* **-եար/-ար** *և* **-իմ** *(տե՛ս) տարրերից կազմված լինելու վարկածը առայժմ անապացուցելի է.*

-ացի, -եցի, -ցի՝ այրացի, արդարացի, աfացի, բառացի, բերանացի, խելացի, հայացի/հայեցի, ձերբացի, մուրցացի, հարևանցի. բաբելացի, դրացի, fաղաfացի, եբրայեցի, հռովմայեցի. *կազմվել է հ.-ե.* *-sko- *և* *-i̯o-*ածանցների բազայի վրա* (*-ski̯o-)՝ *նախորդող ձայնավորով կամ առանց դրա. տեղային իմաստը, ինչպես* **-ոց**-*ի դեպքում, զարգացել է հայերենում, եթե տեղի չի ունեցել* *ti̯o-*ից ծագող ձևերի հետ բաղարկում. մակբայական ձևերի համար* (**աfացի, մուրցացի** *և այլն) թերևս կարելի է ենթադրել* **-աց**-*ով,* **-եաց**-*ով հիմքային ձևերի սեռական-տրականի հետ բաղարկություն.*

-ացու՝ աչացու, ապականացու, ապրացու, խաղաղացու, կենդանացու, հարսնացու, մահացու, մառտացու. *կազմված է* **-աց** *հիմքային տարրից և* **-ու** *ածանցից՝ հետո տարածվելով ոչ* **-աց**-*ով հիմքերի վրա.* **-աց**-*ի համար հմմտ. սեռ.-տր.* **աչաց—աչացու,** *անց. կատ.* **կենդանաց-(այ)—կենդանացու.** *նկատելի է հատկապես պատճառական բայաձևերի և* **-ացու** *ածանցի հիմքային ու իմաստային մերձավորությունը՝* **հարսնացուցանել—հարսնացու.**

-աւանդ՝ գահաւանդ, դարաւանդ, սարաւանդ. -ւանդ-*ը ծագում է իրան.* βand (*իրան.* *band- < *հ.-ե.* *bhendh- *«կապել») արմատից.*

-աւանդակ՝ բարձրաւանդակ, գահաւանդակ, սարաւանդակ. -ւանդակ-*ը ծագում է իրան.* -βandak *բաղադրիչից (հմմտ.* **-(ա)ւանդ**), *որ համաբանությամբ տարածվել է նաև հայ.* **բարձրաւանդակ** (**բարձր** *բնիկ հիմքով)՝ ձևի վրա.*

-աւէտ՝ այգաւէտ, արեգաւէտ, երանաւէտ, կենդանաւէտ, շահաւէտ, շնորհաւէտ, ուրախաւէտ. *ենթադրվում է իրանական ծագում (ըստ Բեյլիի՝* -vaita *խոտան-սակ.* -viya *ձևի կողքին, ըստ Ղափանցյանի՝* -vaiti՝ -vant *ձևի կողքին), բայց բերված զուգահեռները համոզիչ չեն. անհավանական է կապը* **աւէտ** (**աւետ.** *հմմտ.* **աւետ-ել**) *արմատի հետ.*

-աւթ՝ ծանաւթ (—*ծանաչել>ճանաչել, *անց. կատ.* **ծանեայ**). *այլև, թերևս,* **աղաւթ-f (—աղաչել), ամաւթ (—ամաչել). -թ-** *տարրը, անկասկած, ծագում է հ.-ե.* *-ti- *ածանցից, բայց* **-աւ**-*ի ծագման հարցը միանշանակ լուծում չունի. այն կարող է գալ* *-au-*ից (Մեյե. հմմտ.* *-eu-ti- > **-ոյթ**), *-ap-*ից (Շարպանտիե. հմմտ. հ. հնդկ.* jñ·pti- *«իմացություն») կամ* *-ak-*ից (Գոդել, որ ենթադրում է* *-ak-i̯e- **աչ-** *և* *-ak-ti- **-աւթ** *անցումներ). հնարավոր է նաև* **ւ**-*ի նույնպիսի հավելում, ինչպես* **յատանեմ—յաւտ** *տիպի դեպքերում.*

-աւղ/-ող՝ առնաւղ (-ող), ասացաւղ (-ող), փտաւղ (-ող) որսաւղ (-ող), ստացաւղ (-ող). *դերբայական այս ածանցի* **-աւղ** *տարբերակը ծագում է հ.-ե.* *-tel- *ածանցի թեմատիկ* *-tlo- *ձևից՝ նախորդող* *ā-*ով կամ* *ə-*ով. հմմտ.* *g'enətlo- > **ծնաւղ. -ող** *տարբերակը կամ* **-աւղ**-*ի վաղ մենաբարբառային ձևն է* (**աւ>ո.** *հմմտ. ուշ* **աւ>օ**), *կամ, թերևս, գալիս է մի այլ աղբյուրից. Շմիցերը* (Schwyzer, *1946, 49—58) համեմատում է հուն.* -ωλης-*ով ածանցական ձևերի հետ՝* μαινόλης *«մոլեցնող»,* φαινόλης *(լատ.* paenula) *«մի տեսակ թիկնոց» (հ.-ե.* *-olo-/-ā-). *վերջին դեպքում պետք է ենթադրել* **-աւղ** *և* **-ող** *ձևերի բաղարկություն. դերբայական այս ածանցից թերևս տարբեր է այն* **-ող**-*ը, որ հանդիպում է* **ծախող, յաջող,** *նաև* **խնող** *ձևերում, որոնք հանդես են գալիս նաև որպես բայահիմքեր՝* **խնողել, ծախողիլ, յաջողիլ.** *անհնար չէ սրանց ծագումը ուրարտ.* -ul- *(հմմ՛* -ol-) *ածանցից (հմմտ.* ter-—terul- *«դնել»)* (**Ջահուկյան,** *1987, 438*)։

-աւն՝ գեղաւն, գողաւն, գործաւն, զգաւն, կտրաւն, կրաւն. *Ինչպես ցույց է տալիս* **մրջիւն—մրջման, գոչիւն—գոչման,** *այլև իրանական ծագման* **պաշտաւն—պաշտաման** *ձևերի* ւ *(ն-ից առաջ)*/մ *(ձայնավորից առաջ) հերթագայությունը, -ւն-ը ծագել է հ.-ե.* *-men- *ածանցի* *-mn- *ձայնդարձային ձևից՝ նախորդող -ա- ձայնավորով. հմմտ.* **զգամ—զ-գաւն.** *Հետագայում համաբանությամբ տարածվել է այլ հիմքերի վրա. ավելի քիչ հավանական է -ւն-ի* *-tnos *ձևից ծագելու վարկածը (*Greppin, *1973, 61), եթե նկատի առնենք իմաստային տարբերությունը.*

-աւնք՝ գողաւնք, լալաւնք, կոչաւնք, մոռացաւնք, գրաւնք. *կազմված է* **-աւն** *ածանցից և* **-ք** *հոգնակերտից.* **գողաւնք—գողունք, կոչաւնք—կոչունք** *զուգահեռ ձևերը ցույց են տալիս* **-աւն/-ուն** *հերթագայություն և հաստատում են մեր վարկածը -ւն-ի հ.-ե.* *-mn-*ից ծագելու մասին, եթե մանավանդ ընդունենք Մեյեի վարկածը (1936, 48, 130)* **-ուն** *ածանցի՝ մասամբ հ.-ե. դերբայական* *-omno-*ից ծագելու մասին (>*-owno->**-ուն**).*

-աւրէն՝ ազատաւրէն, արքայաւրէն, ինքնաւրէն, հայրաւրէն, հմտաւրէն, քաջաւրէն. *ծագում է* **աւրէն** *բառից, որի աղբյուրն է միջին իրանական* aẑoen *«կերպ, եղանակ» բառը. Թերևս սրա տարբերակն է* **-արէն**-*ը (տե՛ս).*

-աւոր, -ուոր՝ աղեղնաւոր, բանաւոր, լուսաւոր, մեղաւոր, մտաւոր. գինուոր, վարձուոր. *ծագում է հ.-ե.* *bher- *«կրել, բերել» (այստեղից հայ.* **բերել)** *արմատի ձայնդարձային* *-bhor- *ձևից՝ նախորդող* *-ā/ə- *հիմքային տարրով՝* *medə-bhora *(բարդություն)>***մտաւոր.** *Հետագայում -ա-ն դարձել է հոդակապ և տարածվել նաև նախկին ոչ* *-a/ə-*ով հիմքերի վրա.* **գինուոր, վարձուոր** *ձևերը առաջացել են* **գէնու-որ, վարձու-որ** *ձևերից (հմմտ.* **գէն, -ու, վարձ, -ու,** *որոնք իրանական փոխառություններ են) (*Meillet, *1962, 165).*

-աք *(հմմտ.* **-ոք)՝ թանաք** *(այլև առանձին չգործածվող հիմքերից՝* **սլաք).** *ծագում է հ.-ե.* *-k(o)- *ածանցից՝ նախորդող հիմքային -ա- ձայնավորով (հմմտ.* **բարիոք/բարւոք** *և* **փորոք** *ձևերի համար* **բարի, -ւոյ, փոր, -ոյ).** *Հավանաբար նույն ծագումն ունեն -աք-ը* **արտաքին, արտաքս** *և -ք-ն* **ներքին, ներքոյ** *բառերում.*

-աքի՝ արմատաքի. *մակբայական այս ածանցը ծագում է* **-աք** *ածանցի սեռական-տրականի ձևից.*

-բի՝ արամբի, կանամբի, *այս ածանցի* **բ**-*ն ակնհայտորեն նույնն է -ն-ով հիմքերի գործիականի* **-բ** *վերջավորության հետ (հմմտ. եզ. գործ.* **արամբ՝ այր**-*ից և* **կանամբ՝ կին**-*ից). Դժվար բացատրելի է* **ի**-*ն. հ.-ե.* *-bhi *վերջավորության* *-i-*ն չէր կարող պահպանվել վերջնային դիրքում, և մնում է ենթադրել* **-ի** *ածանցի ուշ հավելում* **արամբ** *և* **կանամբ** *հոլովաձևերի վրա. այդպիսի հավելումը սովորական չէ, բայց հմմտ.* **կանացի.** *Այստեղ վիճակը մոտավորապես նույնն է, ինչ հունարենում, որտեղ* *επι πατροφι *(-φι-ն հ.-ե.* *-bhi-*ից) ձևից* -ιον *ածանցով կազմվել է* επιπατρόφιον *«հայրենիք» գոյականը (*Шантрен, *1953, 97). Հայտնի է, որ հ.-ե.* *-bhi-*ն սովորական վերջավորություն չի եղել, հունարենում այն դրվել է և՛ եզակի, և՛ հոգնակի ձևերի վրա՝ հանդես գալով նաև մակբայակերտ արժեքով.*

-(ե)ազ՝ բացաւթեազ, վայրազ. *ծագում է* **ազանիլ** *«գիշերել» բայի հիմքից (հ.-ե.* *au-), *ընդ որում* **բացաւթեազ** *բառի* **ե**-*ի մեջ պահպանվել է* **աւթ** *բառի հիմքային* **ի**-*ն՝* ***աւթի-ազ>աւթեազ.**

-եալ. *դերբայական այս ածանցը ծագում է հ.-ե.* *-lo- *ածանցից՝ սորիստի* *-is-a- *մասնիկով՝* *-isālo->**-եալ,** *սեռ.* **-ոյ.** *-lo-*ն դերբայական արժեքով զարգացել է նաև սլավոնական և թոխարական լեզուներում. հմմտ. հ. սլավ.* неслъ *«տարած (տարեալ)».*

-եակ՝ երկեակ, իննեակ, հարիւրեակ. թամբատեակ, ինքնեակ, ջերմնեակ. *Ինչպես ցույց են տալիս* **սարիկ/սարեակ, սպասիկ/սպասեակ** *տարբերակները՝ համապատասխան իրանական հիմքերով, մենք գործ ունենք իրանական*

-ik ածանցի հին -ya-ka- ձևի հետ. սակայն որոշ դեպքերում առկա է հին -ի հիմքակազմ տարրի և -ակ-ի զուգորդում՝ ճինգ, -ի—ճնգեակ, մաշկ, -ի—մաշկեակ, ինչպես ավելի ուշ շրջանում -ի-ով վերջացող բառերի դեպքում՝ կղզեակ, որդեակ.

-եայ (>-է)՝ անձնեայ, բրդեայ, եղեւնեայ, ծաղկեայ, կճեայ, մաշկեայ, արտեայ, քրիստոնեայ. կազմված է -ի հիմքային տարրից և -այ բաղադրիչից, որ հավանաբար նույնն է -այ-ք ածանցի -այ-ի և, թերևս, հատուկ անունների -այ վերջավորության հետ, այսինքն՝ նույնպես սկզբնական հիմքային տարր է. -ք-ի համար հմմտ. այծ, -ի (սկզբնական հիմքը՝ *այծի)—այծեայ, արեւել-ք, -ից—արեւելեայ, սիրտ, -ի—սրտեայ, փայտ, -ի—փայտեայ. հետագայում տարածվել է նաև սկզբնապես -ի-ով չվերջացող հիմքերի վրա (հմմտ. անձն, -ին—անձնեայ, բուրդ, -ոյ—բրդեայ), ընդ որում առկա են տարբերակային ձևեր՝ միջերկրայ—միջերկրեայ, որկորայ—որկորեայ, փղոսկրայ—փղոսկրեայ. ինչպես -այ-ք-ի -այ-ը, -եայ-ը նույնպես բազմակվել է օտար կազմությունների համապատասխան ձևերի հետ՝ քաղդեայ—ասոր. xaldaya, եբրայ—ասոր. ɪhɪɔaya, մծղնեայ—ասոր. mɪəsɪlələnē, այլև իրան. ծագման դժնեայ, աշտեայ. քիչ հավանական է -այ-ի համեմատությունը կամայ, ակամայ բառերի -այ-ի հետ, որ գալիս է իրան. -ay ածանցից (սա գոյականներից ածականներ է կազմել. ОИЯ. Среднеперсидский язык, 198)։

-եան[1] առաւաւտեան, աստուածեան, երեքեան, հայկեան, ներքոդեան. համընկնում է -ուն, -իստ, -ուստ ածանցներով վերջացող բառերի սեռական—տրականի վերջավորության հետ, որ պարունակում է հ.-ե. *-ti- և -*n/n̥- հիմքային տարրերը՝ -ույն- կամ -tiեn- > -ա/թ/դեան. այս դեպքում -եան-ի համար պետք է ենթադրել *-ույն- կամ *-ույեn- >-եան զարգացումը, թեև բացարձակորեն հավաստի օրինակներ չունենք. պետք է ենթադրել, որ հետագայում վերջավանկային *-i-ի անկմամբ -եան-ն ընկալվել է որպես ինքնուրույն ածանց և տարածվել սկզբնապես -i- չպարունակող բառերի վրա. ածանցի ծագման ընթացքը լավ երևում է արդ (*ṛti-)—արդի և արդեան ձևերի համեմատությամբ.

-եան[2]՝ քերդեան, գեղեան, գիւղեան, գործեան, գրեան, թղթեան, խոզեան, հիւպատեան, մոգեան, մորթեան, նախարարեան, նոխազեան, քաջեան. թերևս փոխառված է իրանական -an հոգնակերտի -yan տարբերակից, որ, սակայն, դասական պարսկերենում դրվում էր ā, ī, ō, ū ձայնավորներով վերջացող բառերից հետո. հայերենում դրվելը բաղաձայններից հետո կարող է բացատրվել նրանով, որ այն ոչ թե ուղղակի փոխառություն է, այլ հայ. -եան-ի՝ իրանական հոգնակերտի հետ բաղարկվելու արդյունք.

[-եաշ՝ խարտեաշ. այս ածանցի առանձնացումը հիմնավորված չէ. նախ՝ չի հանդիպում խարտ հիմք, երկրորդ՝ խարտեաշ բառի ծագումը հայտնի չէ, և հնարավոր չէ պարզել բառի կազմությունը փոխատու լեզվում. սակայն հմմտ. -աշ].

-եար՝ բանեար, իշեար, որեար. ծագում է հ.-ե. -ьro- (*-ero-) ածանցից՝ նախորդող հիմքային -i- ձայնավորով, որ ա-ից առաջ փոխվել է ե-ի (հմմտ. բան, -ի). եթե բան, որ հիմքերի դեպքում -ի-ն նախնական է, ապա էշ-ի դեպքում այն հավանաբար համաբանական է. հմմտ. նաև բարձկեեար (բարձիկն), նաւկեեար (նաւիկն).

-եկան՝ շայեկան (շաճեկան). -ական ածանցի տարբերակն է՝ միացած շաճ, -ի, «օգուտ» բառի հիմքային -ի-ով ձևի հետ (*շաճ/յի-ական>շաճ/յե-կան).

-(ե)կի(ն)՝ նախկի(ն), կրկին, երեքկին, չորեքկին, ճինգկին/ն(ի)նգեկին, վեցկին. եաւթնեկի(ն), տասնեկի(ն), յիսնեկի(ն). ինչպես երևում է բերված օրինակներից, -կի(ն) տարբերակը բառեր է կազմում ցածր թվականներից՝ մինչև վեց-ը ներառյալ, -եկի(ն)-ը՝ ավելի բարձրերից. ճինգ թվականից կազմվում են և՛ -կին-ով, և՛ -եկին-ով ձևերը. -եկի(ն)-ի համար կարելի էր

ենթադրել -եակ և -ին (հմմտ. առաջին) կամ -ի բաղադրիչներ (Greppin, 1973, 67, 1975, 78), սակայն այս դեպքում անբացատրելի է մնում -կի(ն) տարբերակը, որ դժվար է դիտել որպես -եկի(ն)-ի կրճատ ձև կամ բացատրել որպես -իկ և -ի(ն) բաղադրիչների միացում. հարցի լուծումն առավել ևս դժվարանում է, եթե կապ կա -եկի(ն)-ի, -կի(ն)-ի և -եկի-ի միջև.

-եղ՝ անձնեղ, աչեղ, թիկնեղ, ճամեղ, ճիւթեղ. հավանաբար ծագում է ճեղուլ բայի արմատից՝ ճ-ի անկմամբ, ինչպես -ոա<-ճուա, -ատ<-ճատ, -ար<-ճար (կացար, փողար բառերում).

-եղէն՝ ամպեղէն, ասուածեղէն, բոցեղէն, երկաթեղէն, կաւեղէն, ճոգեղէն, ջրեղէն, փայտեղէն, քարեղէն. բաղկացած է -եղ և -էն տարրերից, որոնցից երկրորդը գալիս է կամ իրանական ծագման -էն-ից, կամ հին -այն-ից՝ բարբառային հնչյունափոխությամբ (հմմտ. -եայ>է).

-եղի՝ աղտեղի, մսեղի. կազմված է -եղ և -ի ածանցներից. -եղ-ի համար հմմտ. մսեղ-ի և մսեղէն.

-եմ՝ ճամեմ, խոճեմ. ծագումն անհայտ է. հիմքերից առաջինը՝ ճամ, հնդեվրոպական ծագում ունի (*sab-mo-), բայց -եմ-ը հնդեվրոպական հողի վրա չի բացատրվում. դժվար է ճամեմ-ը բացատրել որպես կրկնավոր բառ, եթե, մանավանդ, -եմ-ը կապ ունի խոճեմ-ի -եմ-ի հետ. խոճ-ը ներկայացնում է խորճ-ի տարբերակը, և ռճ կապակցությունը ցույց է տալիս իրանական (պարթևական) ծագում, բայց բուն աղբյուրը հայտնի չէ.

-եմն՝ երբեմն, ուստեմն, ուրեմն. կազմված է -ե- հիմքային տարրով (հմմտ. երբեմ, ուստեմ, ուրեմ, որոնց մեջ առկա է -ե- հիմքային տարրը և -մ մասնիկը հ.-ե. *kᵘe-ից). -մն-ը, որ հանդիպում է նաև ոմն և իմն դերանունների մեջ, ծագում է հ.-ե. ինչ-որ մասնիկից, թերևս նույն աղբյուրից, ինչ. հուն. μήν/μέν հաստատական մասնիկը (հ.-ե. sma, *smē) (Джаукян, 1982, 149).

-ենի՝ դառնենի, հայրենի, մայրենի. այծենի, գայլենի, գառնենի, ոչենի. արմատենի, խնձորենի, ուռենի, հավանաբար ծագում է -ան և -ի ածանցների միացմամբ (Bolognesi, 1962, 19—23). Վ. Բենեցյանուն ծառանունների համար ենթադրում է ուրարտական ծագում (Bănateanu, 19), բայց -ենի-ով ձևերը -ի-ով ձևերի համեմատությամբ ավելի նոր են. -ան-ի ու -ենի-ի հարաբերությունը գիտակցվել է, և ուշ շրջանում ծնդենան-ի փոխարեն կազմվել է ծնդենի ձևը. հմմտ. նաև արփեան—արփենի, արքայեան—արքայենի, երեսնամեան—երեսնամենի և այլն.

-ետ (հմմտ. -ատ, -իտ, -ուտ)՝ զգետ, (—զգենուլ), ուռետ, այլև, իրան. հիմքով, պահետ, թերևս նաև արուետ (հնարավոր է հայ. ձևի բաղարկում իրանականի հետ. հմմտ. թ. հ. պրսկ. aruvastam «պնդակաղմություն, ճարտարություն, ընդունակություն»). ծագում է հ.-ե. *-sti- ածանցից՝ նախորդ *-e- ձայնավորով.

-երեակ՝ եաթերեակ, ճինգերեակ, վեցերեակ, տասներեակ. կազմված է -եր տարրից -եակ ածանցով. սրանից -եր-ը ճինգեր- ձևի մեջ հավանաբար ծագում է հ.-ե. *penkᵘe-ro- ձևի *-e-ro-ից, մյուս ձևերում -եր-ը կամ համաբանական է՝ ճինգեր- ձևի ազդեցությամբ առաջացած, կամ գալիս է հ.-ե. *-er- հակադրական ածանցից, որ *-(e)ro-ի աթեմատիկ ձևն է.

-(ե)ռորդ՝ երկռորդ, երրորդ, չորրորդ, ճինգերորդ, վեցերորդ, եաթներորդ. -ռորդ-ի -ռ-ն ծագում է հ.-ե. *-ro-ից՝ որի *-o-ն պահպանվել է հաջորդ -ռդ-ից առաջ՝ *երկիրորդ>երկռորդ, *երիրորդ>երրորդ, *չարիրորդ>չորրորդ. -ռդ-ն հավանաբար ծագում է հ.-ե. *-dhro- ածանցից (հմմտ. -որդ). ճինգերորդ բառի մեջ նույնպես առկա է *-ro-ն, իսկ -ե-ն հիմքային է (*penkᵘe-ro- >ճինգերո-). ավելի բարձր թվականների -երորդ-ի -երո-ն կամ ճինգերորդի-ի համաբանական ազդեցության արդյունք է, կամ գալիս է *-ro-ի *-ero- տարբերակից.

–եցիկ՝ գեղեցիկ. *ի տարբերություն* ազդեցիկ, դիեցիկ, երգեցիկ *կազմությունների, որոնք ածանցված են* –եաց *հիմքային ձևից* (երգեաց—երգեցիկ) –իկ *ածանցով և զուգահեռ են* –ացիկ-*ով* (մուրացիկ), –ուցիկ-*ով* (հեղծուցիկ) *կազմություններին*, գեղեցիկ-*ի դեպքում բայական համապատասխան հիմք չկա. մնում է ենթադրել կամ համաբանական կազմություն, կամ նախնական* *գեղի *հիմքի սեռական-տրականից* (գեղեաց) –իկ *ածանցով կազմված ձև.*

–եւ՝ արդարեւ, այնուհետեւ, այսուհետեւ, որովհետեւ. *նույն ծագումն ունի, ինչ գործիականի կազմիչը՝ բուն* –ւ *վերջավորությամբ, բայց ձայնդարձի այլ աստիճանով. հմմտ.* արդարով, հետով *ձևերը* արդարեւ, որովհետեւ *ձևերի դիմաց.* –եւ–*ով հին ձևերը պետք է տարբերել* –եաւ–*ից* (<-ի–աւ) *ծագած ավելի ուշ ձևերից՝* առաջեաւ (*առաջի–աւ)>առաջեւ.

–եւին՝ ամենեւին– –ւ– *տարրը նույն ծագումն ունի, ինչ գործիականի* –ւ–*ն* (*-bhi), *ընդ որում* –ե–*ն հիմքային տարր է. ինչ վերաբերում է* –ին–*ին, այն կամ հայերենի* –ին *ածանցն է (հմմտ.* վերին, ներքին), *կամ, որ ավելի հավանական է, եթե նկատի առնենք* ամենեւին *բառի մակբայական գործածությունը, պահպանել է* *-bhi-*ի* *-i-*ն հաջորդող ցուցական տարրից առաջ.*

–եք՝ երբեք, ուստեք, ուրեք. *կազմված է* –ե– *հիմքային տարրից (հմմտ.* երբեմն, ուստեմն, ուրեմն) *և* –ք *մասնիկից, որ ծագում է հ.-ե.* *-k^{u}e-*ից (հ. հնդկ.* ca, *հուն.* τε, *լատ.* que) (Meillet, 1936, 90).

–եքեան (–եքին)՝ ամենեքեան, բոլորեքեան, երեքեան, չորեքեան, ինքնեքեան. *կազմված է հ.-ե. հոգնակի* *-es *վերջավորությունից ծագող* –եք–*ի և* –եան (–ին) *ածանցի միացմամբ ու հետագա ընդհանրացմամբ. հմմտ.* *(k^{u})tyores>չորք *և* չորեք–.

–էն՝ բուէն. *հավանաբար ծագում է իրան. փոքրացուցիչ-փաղաքշական* -ēc *ածանցից, որ հանդես է գալիս նաև* Մանէն (Մանայն) *հատուկ անվան մեջ* (-ēč<*-aiča-). *սակայն* բուէն–*ի* բու *հիմքը բնիկ հնդեվրոպական է, որին համապատասխանում է պրսկ.* būm-*ը. պետք է ենթադրել բաղարկություն.*

–էն[1]. *հանդիպում է միայն իրանական փոխառություններում* (նկարէն—նկար, *այլև* քաղկէն *«զարեհաց», որի հարաբերությունը* կասկ *«կեղևված գոտի» բառի հետ չի դիտակցվում) և ծագում է իրան.* -ēn *(-aina-) ածանցից.*

–էն[2]՝ այդրէն, այսրէն, անդէն, անդրէն, ապաքէն, ասպէն. ձեզէն, մեզէն, քեզէն. *ծագում է հ.-ե.* *-ei-no-/-oi-no- *դերանվանական ձևից, որ առկա է նաև* սո–յն, դո–յն, նո–յն *ձևերի մեջ* (Pokorny. 1, 286. *հմմտ. նաև* Meillet, 1898, 274 *և հջ.)։*

–էք՝ այծէք, ձեռէք. *ամենայն հավանականությամբ* –եայ–ք–*ի հնչյունափոխված տարբերակն է՝* –եայ–ք>–էք *այծի–այք>այծէք. ձեռէք–ի* –էք–*ը համաբանական է, եթե նախնական* *ձեռի *տիպի հիմք չենթադրենք.*

–թար՝ վաթար. *ծագում է իրան.* -tar-*ից, որ բաղդատական ածականների կազմիչ է.*

–ի՝ արծաթի *(հմմտ.* արծաթ), գերի *(հմմտ.* գերել), երկ–սայրի *(հմմտ.* սայր), կաղնի *(հմմտ.* կաղին), կ*գի *«կարագ» (հմմտ.* կով՝ վ/գ *հերթագայությամբ),* հոգի *(հմմտ.* հոգ, հով), ներքինի *(հմմտ.* ներքին), ամայի *(հմմտ.* ամալ *«թափել»),* արի *(հմմտ.* այր, ար–), արծաթի *(հմմտ.* արծաթ), աւելի *(հմմտ.* յ–աւելուլ), ձրի *(հմմտ.* ձիր), այծի *(հմմտ.* այծ), հանի *«տատ» (հմմտ.* հան). *ծագում է հ.-ե.* *-i̯o-/-ā- *ածանցից (հ. հնդկ.* svapn(i)yam *«երազ»,* svápna- *«քուն», լատ.* somnium *«երազ»* (somnum *«քուն»), հուն.* ὀεξιός *«աջ, աջակողմյան»). եթե* –ի/ա–*ով հիմքերի սեռական-տրականի* –ի–*ն ծագում է հ.-ե.* *-i̯o- *ածանցից, ապա ծագմամբ նույնական է* –ի *ածանցի հետ.*

-իլ՝ կաթիլ, տեսիլ. *եթե նկատի ունենանք* տեսիլ *բառի* տես- *հիմքի հնդեվրոպական ծագումը, ապա հավանական կլինի* -իլ-*ը բխեցնել հ.-ե.* *-lo- *ածանցից՝ նախորդ* -ի *ձայնավորով. հմմտ. նաև առանձին չգործածվող* խնձիղ (*խինձ—խինդ), տորմիղ/լ (*տորմ/տարմ).

-իկ[1]՝ աղչիկ, այրիկ, աշիկ, մասնիկ, փոքրիկ, *այլև* Աստղիկ, Զուլիկ, Յուսիկ. *ինչպես ցույց է տալիս* -իկ-*ով բառերի թեք հոլովների* -ն-*ով հիմքը* (աղչիկ, -ան, աշիկ, -ունք *և այլն), ծագում է հնդեվրոպական բաղադրյալ* *-kon- *ածանցից՝* *-i- *հիմքակազմ տարրով և* *-kon->-կն *անցմամբ.* *-k-*ն ն-ից առաջ չի շնչեղանում, ինչպես* ակն, ձուկն, մուկն *(հմմտ. նաև* մատն<*mat-*) բառերում. եզակի ուղղականի համար հնարավոր է ենթադրել սկզբնական* -n-*ի անկում և, թերևս, իրանական ծագման* -իկ-*ով հիմքերի հետ բաղարկություն.*

իկ[2]՝ այժմիկ, դրանիկ, մարտիկ. *ծագում է իրանական* -ik (*-ya-ka-) *ածանցից, որ հաճախադեպ է իրանական փոխառություններում՝* մարզիկ, ոստանիկ, ռազմիկ, տոնմիկ, սպասիկ *(հմմտ.* սպասեակ). *կազմում է նաև ժողովուրդների ներկայացուցիչների անուններ՝* ճնդիկ, պարսիկ.

-ին *(հմմտ.* -այն)՝ առաջին, արտաքին, ինքնին, լոին, յետին, ջերին, ստորին, վերին. *ծագում է հ.-ե.* *-no- *ածանցի* *-eno-, *թերևս մասամբ նաև* *-ino- *տարբերակից.*

-ինք՝ նախատինք, բերդայինք, գանինք, դատինք, հեգենայինք, մաղինք, քրիստոսինք. *այս ածանցի տակ միավորվող բայերից անուններ ածանցող* -ինք-*ը* (նախատինք) *և հավաքական անուններ կազմող* -ինք-*ը հավանաբար նույն ծագումն ունեն, ինչ* -ն-*ով վերջացող մի շարք բառերի* -ինք-*ը, որ գալիս է հ.-ե.* *-n-*ով վերջացող հիմքերի հոգնակի* *-en-es *ձևից՝* առն *«վայրի ոչխար»*—առինք, բեռն—բեռինք, գառն—գառինք, դառն—դառինք, եղն—եղինք, լեառն—լերինք, *այլև* ազն *«սերունդ»*—ազինք, խաչն—խաչինք, հեռն—հեռինք. *եզակի թվում* ն-*ից զուրկ* քար *տիպի բառերի հոգնակի* քարինք *ձևի համաբանությամբ* -ինք-*ը կարող էր տարածվել և ստանալ ինքնուրույն հավաքականի արժեք.*

-իշ *հանդիպում է միայն իրանական փոխառություններում* (բաշխիշ—բաշխել) *և ծագում է* -iš (-išn < -iθna-) *ածանցից.*

-իչ, -ուչ՝ բրիչ, գրիչ, գործիչ, լուծիչ, ստեղծիչ. անյարուչ *«չհարող, անմիաբան»*, ընկալուչ *(հմմտ.* ընկալիչ), թաքաուչ, մարթուչ, սրտառուչ, տեսուչ. *ծագում են հ.-ե.* *-klā-*ից՝* (*-k-+*-lā-) *նախորդող* *-ĭ- *կամ* -ŭ- (-ի-, -ու-) *հիմքային ձայնավորներով. հմմտ. հ. սլավ.* которыЧъ *«կուվարար».*

-իստ *(տե՛ս* -աստ, -եստ, -ուստ)՝ հանգիստ *(հմմտ. հանգ-չ-իլ). ծագում է հ.-ե.* -sti- *ածանցից՝ նախորդող* *-i-*ով, ընդ որում հանգիստ բառի մեջ ի-ն արմատական է՝* *kʷī-*>*ǵh-՝* kʷ-*ի ձայնեղացմամբ* *-n-*ից հետո.*

-իր *(հմմտ.* -ար, -որ, -ուր, *այլև* -եռեակ, -(ե)ռորդ)՝ երկիր, երիր, չորիր. *ծագում է հ.-ե.* *-ro- *ածանցից՝ նախորդող* *-i- *ձայնավորով՝* *dui-ro->երկիր, *tri-ro->երիր. չորիր-*ի* ի-ն *և* վեցերիր-*ի* -իր-*ը համաբանական են. վերջինիս* -եր-*ի մասին տե՛ս* -երեակ *ածանցի քննության մեջ.*

-իցս՝ երկիցս, երիցս, չորիցս, քանիցս. *կազմված է* -ից *տարրից և* -ս *ցուցական հոդից, որ մակբայական արժեք է տալիս.* -ից-*ի համար հնարավոր է երկու ենթադրություն. այն կամ գալիս է հնդեվրոպական շրջանից և զուգահեռ ունի հ. վ. գերմ.* -(i)ski-*ի մեջ* zwiski *«կրկնակի» բառում* (Meillet, *1936, 101) կամ սեռական-տրականի* երից, չորից *ձևերի* -ից-*ն է՝ համաբանորեն տարածված.*

(Շարունակելի)